

ԼՈՌՈՒ ԽՈՍՎԱԾՔԻ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ԵՎ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մ. Ե. ԱՍԱՏՐՅԱՆ

Պրոֆ. Հ. Աճառյանը (տե՛ս «Հայ բարբառագիտություն» աշխատությունը) Լոռու խոսվածքը մտցնում է Արարատյան բարբառի մեջ: Գծելով Երևանի (Արարատյան) բարբառի տարածման սահմանները, նա գրում է. «...Երևանի բարբառը հյուսիսային կողմերը երկու կղզյակներ ալ կձևացնեն, մեկը Բորչալուի գավառին մեջ (Շուլավեր, Շամշադին, Լոռի և շրջակաները) և երկրորդը Ռիֆլիզի Հավլարար թաղը՝ որ Երևանի գաղթականություն մ'է»¹: Բայց պրոֆ. Հ. Աճառյանը ոչ մի խոսք չի ասում Լոռու խոսվածքի լեզվական առանձնահատկությունների մասին:

Պրոֆ. Ա. Ղարիբյանն արդեն Լոռու խոսվածքը համարում է Արարատյանի ենթաբարբառ: Նա գրում է. «Արարատյան բարբառով խոսող քիչ թե շատ մեծ քանակությամբ գյուղեր գտնում ենք Երևանի, Կոտայքի, Վաղարշապատի և Աշտարակի շրջաններում: Արարատյան բարբառով խոսում են լոռեցիները, Լոռին է միակ վայրը, որտեղ Արարատյան բարբառը կազմում է ճնշող մեծամասնություն, սակայն լոռեցիների խոսվածքը, պատկանելով Արարատյան բարբառին, միաժամանակ և ունի իր մեջ թույլ տարրեր Ղարաբաղի և Թբիլիսիի բարբառներից, այնպես որ այն կարելի է համարել Արարատյան ենթաբարբառ»² (ընդգծումն իմն է—Մ. Ա.):

Այսպես ուրեմն, հայ բարբառագիտական գրականության մեջ Լոռու խոսվածքը մտցվում է Արարատյան բարբառի մեջ կամ համարվում է նրա ենթաբարբառը: Որքան էլ այդ ցավալի լինի, Արարատյան բարբառը, որ մեր ամենատարածված ու գլխավոր բարբառներից մեկն է և համարվում է արևելահայ գրական լեզվի հիմքը, ցայսօր մնում է շուտամոռացիկ: Արարատյան բարբառի մասին թոռացիկ ու համառոտ տեղեկություններ են տալիս ընդհանուր բարբառագիտական աշխատությունները: Ինչ վերաբերում է Լոռու խոսվածքին, ապա այն, չնայած իր հետաքրքիր կողմերին ու կարևորությանը, ամենևին չի գրավել հայագետների ուշադրությունը: Այդ խոսվածքի մասին մի փոքրիկ հոդված իսկ չունենք: Միայն պրոֆ. Ա. Ղարիբյանը իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ Արարատյան բարբառին նվիրված հատվածում մի երկու դիտողություն է անում Լոռու խոսվածքի առանձնահատկությունների մասին:

Հասկանալի է, որ մի փոքրիկ հոդվածում հնարավոր չէ ուրվագծել այդ խոսվածքի ամբողջական պատկերը, այլ կարելի է ներկայացնել միայն ամենաընդհանուր և գլխավոր լեզվական առանձնահատկությունները:

ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լոռու խոսվածքը ընդամենն ունի 41 հնչյուն. դրանցից ձայնավորներ են 6-ը. ա, օ, ու, է, ի, ր. երկբարբառներ՝ 2-ը՝ ուօ, որն արտահայտում ենք ո տառով և իէ. որն արտահայտում ենք ե տառով:

Բաղաձայններ՝ 33-ը.

եռաչարք	երկչարք	միաչարք
բ ա փ	դ խ	մ, յ, ն, ր, ու, է, հ
դ կ ք	զ ս	
յ՝ կ՝ ք՝	ժ շ	
դ տ թ	վ ֆ	
ձ ծ ց		
ղ ճ յ		

¹ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Բ, Մոսկվա—Նոր-Նախիջևան, 1911, էջ 37:

² Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 219:

Մի շարք գյուղերի խոսվածքներում (Ղալաշա, Կոթի, Շնոզ և այլն) կա նաև ձայնեղ հ։
 Բ, գ, դ, ձ, ջ պայթականները բառասկզբում շնչեղացած արտասանություն ունեն, որի մասին խոսելու ենք ստորև։

Գրաբարի համեմատությամբ հնչյունական գլխավոր փոփոխությունները կարելի է ամփոփել հետևյալ կետերում։

1. Լոռու խոսվածքի շեշտը, որպես կանոն, ընկնում է նախավերջին վանկի ձայնավորի վրա (այդպես է ընդհանրապես արևելյան բարբառների շեշտադրությունը՝ ի տարբերություն արևմտյան բարբառների վերջնավանկ շեշտադրության), օրինակ՝ աման>ա՛ման, ականջ>ա՛ն-զաճ, ատամ>ա՛տամ, ջրաղաց>ջա՛ղաց, տախտակ>տա՛խտակ և այլն։ Սակայն Լոռու շեշտը ավելի ուժեղ է, քան, ասենք, Երևանի բարբառի շեշտը, որի պատճառով էլ Լոռու խոսվածքում նախաշեշտ ձայնավորները հնչյունափոխվում են ը-ի կամ առանձին դեպքերում սղվում են (իսկ Երևանում մնում են անփոփոխ), օրինակ՝

ա>ը

աղատել>ըղատիլ
 ալեոք>հըլիվոր
 բաժանել>ըբժանիլ
 հարևան>հըրէվան
 կարկատան>կըրկատան
 մատանի>սըտանիք
 տաքասալ>տըքանալ

ե>ը (օ)

եղունգն>ըղունդ || ղունդ
 երեկոյ>ըրիգու || րիգու
 երևիլ>ըրէվալ || րէվալ
 գերեզման>ղըրէզման

ո>ը (օ)

ոլորել>ըլօրիլ || լօրիլ
 ողողել>ըղօղիլ || ղօղիլ
 բորբոքել>բըրբօքիլ
 սովորել>սըվորիլ

Դրան դումարվում է նաև այն, որ երկու ա ունեցող երկվանկ բառերի ա-ն բառի ածման ղեպքում շեշտակորույս լինելով վերածվում է ը-ի, ինչպես աման>ըմանի, անզաճ>ընզաճի, ատամ>ըտամի, բամբակ>բըմբակի, կանանչ>կընանչի, տախտակ>տըխտակի և այլն։

Նախաշեշտ ձայնավորների (հատկապես ա ձայնավորի) հնչյունափոխությունը Լոռու խոսվածքի ամենացայտուն առանձնահատկություններից մեկն է։

2. Է և օ ձայնավորներից բացի, խոսվածքն ունի ե և ո երկբարբառները. գրաբարյան ե-ին սովորաբար համապատասխանում է ե (իէ), իսկ ո-ին՝ ո(ուօ), ինչպես՝

ե>ե (իէ)

բեռն>բեռը
 բերդ>բեռթ
 ղեղ>ղեղ
 թեղ>թեղ
 նեղ>նեղ

ո>ո (ուօ)

ղող>ղող
 գորտ>գոռո
 խորթ>խոռթ
 թոռն>թոռը
 խմոր>խմոր

Ո և ե երկբարբառների առկայությունը Լոռու խոսվածքի ամենահատկանշական հնչյունական կողմերից մեկն է և անմիջաբար իր վրա է զրավում ուսումնասիրողի ուշադրությունը։

Ի, ու, ը ձայնավորները սովորաբար մնում են անփոփոխ։

3. Գրաբարյան երկբարբառներից այ-ը դառնում է է, օրինակ՝ այս>էս, այծ>էծ, լայն>լէն և այլն, աւ-ը՝ օ, օրինակ՝ օւձ>օձ, օւր>օր, ամաւթ>ամօթ և այլն, իւ-ը՝ ի, օրինակ՝ ալիւր>ալիր, արիւն>արին և այլն, օյ-ը ևս ի, օրինակ՝ բոյթ>բիթ, զրոյց>զրից, թոյլ>թիլ և այլն։

4. Ընդունված է, որ Արարատյան բարբառն ունի քառաստիճան բաղաձայնական համալարգ հետևյալ ձևով³։

բ՛	բ	պ	փ
դ՛	դ	տ	թ
գ՛	գ	կ	ք
ձ՛	ձ	ծ	ց
ջ՛	ջ	ճ	չ

³ Տե՛ս Զ. Ահառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 330։
 Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 221։

Ուղղահայաց առաջին շարքը ներկայացնում է բարբառի շնչեղ ձայնեղները, երկրորդը՝ պարզ ձայնեղները, երրորդը՝ խուլերը և չորրորդը՝ շնչեղ խուլերը:

Որքան էլ այդ տեսակետը տարածված լինի, այնուամենայնիվ Արարատյան բարբառում շնչեղ ձայնեղների, որպես պարզ ձայնեղներից տարբեր հնչույթների, գոյությունը ապացուցված համարել չի կարելի:

Արարատյան բարբառի ուսումնասիրությամբ զբաղվող լեզվաբաններն ասում են, թե իրենք տարբերություն են գտնում մի կողմից՝ բեբան, գառ, դուռ, ծու, ջուր բառերի և մյուս կողմից՝ քումբ, գանգ, լինդ, հունծ, կառմունջ բառերի բ, գ, դ, ձ, ջ հնչյունների արտասանության մեջ. առաջին խմբի բառերի մեջ այդ հնչյունները որոշ շնչեղություն ունեն (բ՛երան, գ առ և այլն), իսկ վերջին խմբի բառերի մեջ շնչեղություն չունեն (թումբ, դանգ և այլն): Բայց արտասանական այդ տարբերությունը դեռևս հիմք չի տալիս բարբառում ընդունելու առանձին շնչեղ ձայնեղ հնչույթների գոյությունը:

Որպեսզի Արարատյան բարբառում ապացուցված համարվեր շնչեղ ձայնեղների, որպես առանձին հնչույթների, գոյությունը, հնչյունական նվազագույն միավորների հակադրությամբ բարբառում պետք է ունենայինք մի խումբ բառեր, որոնք այլ հնչյունների նույնության պայմաններում շնչեղ ձայնեղներով մի իմաստ արտահայտեին, իսկ պարզ ձայնեղներով՝ մի այլ իմաստ, այսինքն՝ բարբառը պետք է երևան հաներ մի խումբ բառեր, որոնց մեջ շնչեղ ձայնեղները իմաստազատիչ դեր են կատարում:

Արարատյան բարբառում, ասենք, կ-ն և ֆ-ն կամ տ-ն և ք-ն տարբեր հնչույթներ են, որովհետև ունենք կաւնի-ֆանի, կաւ-ֆաւ, տաւ-քաւ, տեղ-քեղ և այլ գույգերը, որոնք այլ հնչյունների նույնության պայմաններում կ-ում ու տ-ով մի իմաստ են արտահայտում, իսկ ֆ-ով ու ք-ով՝ մի այլ իմաստ, այսինքն կ-ն ու ֆ-ն, տ-ն ու ք-ն, որպես տարբեր հնչույթներ, իմաստազատիչ դեր ունեն: Նվազագույն հակադրությունների մեթոդով վերլուծելով կհամոզվենք, որ տարբեր հնչույթներ են և իմաստազատիչ գեր են կատարում նաև պ-ն և փ-ն, ծ-ն և գ-ն, ս-ն և շ-ն:

Երբ հարցին մոտենում ենք այս տեսակետից, ապա պարզ է դառնում, որ Արարատյան բարբառում չկան բառեր, որոնք այլ հնչյունների նույնության պայմաններում շնչեղ ձայնեղ արտասանությամբ մի իմաստ արտահայտեին, իսկ պարզ ձայնեղ արտասանությամբ՝ մի այլ իմաստ, այսինքն՝ իրենց իմաստազատիչ դերով հակադրվեին շնչեղ ձայնեղները և պարզ ձայնեղները: Իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ Արարատյան բարբառում շնչեղ ձայնեղները առանձին հնչույթներ չեն, նրանք իմաստազատիչ դեր չեն կատարում և սոսկ բ, գ, դ, ձ, ջ պարզ ձայնեղների բառասկզբի դիրքային տարբերակներն են: Նույնն է նաև Հոռու խոսվածքում: Գրաբարյան բառասկզբի բ, գ, դ, ձ, ջ ձայնեղները այս կամ այն չափով շնչեղ արտասանություն ունեն, բայց քանի որ հանդես չի գալիս շնչեղ ձայնեղ-պարզ ձայնեղ հակադրության իմաստազատիչ դիրքը, ուրեմն և առանձին շնչեղ ձայնեղ հնչույթներ գոյություն չունեն:

Երևանի և Հոռու խոսվածքները համահնչուն լինելով պայթական բաղաձայնների համակարգով՝ խուլ պայթականների փոփոխության ինչ-ինչ տարբերություններ են երևան հանում: Ըստ բարբառագետների վկայության, բառամիջի և բառավերջի խուլերը Երևանի խոսվածքում վերածվում են ձայնեղների, այսինքն՝ պ>բ, կ>գ, տ>դ, ծ>ձ, ճ>ջ, օրինակ՝ պապ>պար, ճակատ>ճաղաղ, կատու>կադու, ծիծաղել>ծիծաղել, կարճ>կարջ և այլն: Հոռու խոսվածքում բառամիջի և բառավերջի խուլերի այսպիսի հետևողական ձայնեղացում չի նկատվում, խուլերը ձայնեղանում են միայն առանձին դեպքերում: Վերևում բերված բառերի մեջ, օրինակ, խուլերը մնում են անփոփոխ և ունենում ենք պապ, ճակատ, կատու, ծիծաղել կարճ ձևերը:

5. Ե, կ, լ հնչյունները է և ի առաջնալեզվային ձայնավորներից առաջ քմայնանալով, վերածվում են գյ, կյ, քյ-ի, օրինակ՝ գետին>գյէդին, գինի>գյինի, ներկիլ>նէրկյիլ, ոսկի>վոսկյի, քենի>քյէնի, քիթ>քյինթ և այլն: Այլ դիրքերում գ, կ, լ հնչյունների քմայնացում չի նկատվում:

6. Գրաբարյան և վերջնահնչույթներ արևմտահայ և արևելահայ գրական լեզուներում և հայերենի բարբառների բացարձակ մեծամասնության մեջ ընկել է, ինչպես՝ եզն>եզ, մուկն>մուկ, գառն>գառ և այլն: Հոռին այն հազվագյուտ շրջաններից մեկն է, որտեղ գրաբարյան և վերջնահնչույթներ հանդես է գալիս, բայց փոփոխված, այն է՝ բ ձևով, ինչպես՝ բեռն>բեռը, գառն>գառը, դուռն>դուռը, թոռն>թոռը, կաթն>կաթը, հարսն>հառսը, մատն>մատը, ոտն>վոտը, սերմն>սերմը և այլն: Այս բառերի նմանակությամբ մի շարք բառերի վերջում ավելացել է ը հնչյունը, ինչպես՝ աստղ>աստղը, անէծք>անիծկը, աչք>աչկը, խօսք>խօսկը, ճիւղ>ճուխկը,

շող>շոխկր, միտք>միտկր: Ը հնչյունի հավելումը առանձնապես տարածված է Գուգարքի շրջանի 'Իերեղ, Ալավերդու շրջանի Շնող և Ստեփանավանի շրջանի Ագարակ գյուղերում:

Չափազանց հետաքրքրական է նշել, որ Դերեղ գյուղում (Գուգարք) գրաբարյան Բ-ով վերջացող անեղականները վերջում ր են ստանում, օրինակ՝ անէծք>անիծկր, աչք>աճկր, խօսք>խօսկր, հրաշք>հրաշկր, մեղք>մեխկր և այլն: Գրաբարյան և վերջնահնչյունի այսպիսի դրույթամբ Լոռու խոսվածքը յուրահատուկ դիրք է բռնում հայերենի բարբառների մեջ, առանձնանում է Արարատյան բարբառից ու նրա խոսվածքներից և որոշ չափով մոտենալով Ղարաբաղի բարբառին (Ղարաբաղում և-ն ոչ միայն պահպանվում է, այլև վրան ավելանում է մի ր ևս, օրինակ՝ մուկն>մօկնր, ձուկն>ծիւկնր և այլն)՝ չփման մեջ է մտնում գրաբարի հետ:

7. Լոռու մի շարք գյուղերում (Ղալաշա, Կոթի, Շնող և այլն) ձայնավորով սկսվող մի շարք բառերի սկզբում ավելանում է ձայնեղ հ հնչյունը, օրինակ՝ աջ հաշ, առաջ հառաշ, արգար հարթար, արթուն հարթուն, արջ հառջ, ւափ հափուո, երեք հիրեք, էղ հեք, իմանալ հիմանալ և այլն:

Չ Ե Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գուրական անուն

1. Հոգնակիի կազմությունը.—Միավանկ բառերի հոգնակին, որպես կանոն, կազմվում է չոր մասնիկով, ինչպես՝ արջ>առչ-առչէր, բահ>բահ-բահէր, գող>գող-գողէր, լոր>լոր-լորէր, խոտ>խոտ-խոտէր, մայր>մէր-մէրէր և այլն:

Գրաբարյան և վերջնահնչյունը փոխվում է ր-ի (զառն>զառր և այլն), բայց հոգնակիի կազմության ժամանակ այդ ն-ն վերականգնվում է, ինչպես՝ զառն>զառր-զառնէր, հարսն>հառսր-հառսնէր, թոռն>թոռր-թոռնէր և այլն: Ֆզն>յէզր բառի հոգնակին լինում է յլզնիք, իսկ մարդ>մառթ բառի հոգնակին՝ մաոթրկէլ:

Կան մի քանի միավանկ բառեր, որոնց հոգնակին կազմվում է ան մասնիկով, Այդ բառերն են. այծ>էծ-իծան, գայլ>գլլ-գլլիան, դէզ>դէզ-գիլան, էշ>էշ-իշան, թի>թի-Ռիան, ձի>ձի-ձիան, ձու>ձու-ձվան:

Ի աղաճայնով վերջացող բազմավանկ բառերի հոգնակին, որպես կանոն, կազմվում է նի մասնիկով, օրինակ՝ ալեւոր>հլիվոր-հլիվորնի, բանալի>բրլանիք-բլանրքնի, թոնիր>թօրօն-թօրօնի, ճիպոտ>ճիպոտ-ճիպտնի և այլն: Լոռու խոսվածքում հոգնակի թիվը կազմվում է նաև Բ մասնիկով, որը սովորաբար ստանում են ի և ա ձայնավորներով վերջացող բազմավանկ բառերը, օրինակ՝ քախկըցի-քախկըցիք, գլղաղի-գլղաղիք, լօռէցի-լօռնցիք, վոսկյի-վոսկյիք և այլն: Սահմանափակ զործածություն ունեն Լնի (գյուլրա-գյուլրէնի, ճամփա-ճամփէնի, տարի-տարէնի, փէսա-փէսէնի, քլէնի-քլէնէնի, քլէոի-քլէոէնի), տինք (անէր-անէրտինք, ինգլէր-ինգլէրտինք, տէքր-տէքլէրտինք, քյիր-քլորտինք, ախպէր-ախպէրտինք) հոգնակիաւերտ մասնիկները:

2. Հոլովները և նրանց կազմությունը.—Գրական լեզվի և ում ճյուղի մյուս բարբառների նման Լոռու խոսվածքն ունի 7 հոլով, ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, զործիական, ներգուական:

Ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է՝ հոլովական զրո վերջավորությամբ, օրինակ՝ Մի էլիսա էկավ: Մի մառը գնէր (—գնում էր):

Սեռական հոլովը կազմվում է ի, ու, վա-վան, ան և այլ վերջավորություններով (սար-յարի, ֆօքյի-ֆօքու, օր-օրվան, գուռ-գուան): Սեռական հոլովը հոգ ստանալ չի կարող:

Տրական հոլովը կազմությամբ չի տարբերվում սեռականից, միայն որոշյալ առման դեպքում ստանում է ո կամ ն հոգը: Ուրեմն՝ սեռական և տրական հոլովները տարբերվում են միայն որոշյալ հոգի զործածությամբ:

Հայցական հոլովում գրանորվում է իրի և անձի առում:

Իրի առման դեպքում հայցականը նմանվում է ուղղականին, ինչպես՝ էն գառը մորթիլ տէմ «այն գառը պիտի մորթեմ», Կովը ծախիլ տէմ «կովը պիտի ծախեմ»: Անձի առման դեպքում հայցականը նմանվում է տրականին, օրինակ՝ էն գառին մորթիլ տէմ «այն գառսը պիտի մորթեմ», Կովին ծախիլ տէմ «կովին պիտի ծախեմ» և այլն: Տեղի հատուկ և հասարակ անունների հայցականը զործածվում է նաև իբրև ներդրական՝ ցույց տալով այն տեղը, որտեղ կատարվում է զործողությունը, օրինակ՝ Գլղաղի Համրօյի տունը կռիվ էր ընդէլ: Բնվան շատ տուն կա, րԱտվիանավան միսն էծան ա և այլն:

Բացառական հոլովը կազմվում է իզ||ույ վերջավորություններով, ինչպես՝ սարից, քարից, վոսկուց, զարուց և այլն։ Որոշ դեպքերում բացառականի իզ վերջավորության գ-ն կարող է ընկնել, օրինակ՝ Գրիբորանցի, Սահկանցի, Մուրադանցի, ինձանի, մէրօնցի և այլն։ Բացառականի գ-ի անկում է նկատվում ց, վան հոլովումների և ղերանունների մեջ։

Կա բացառականի մի ուրիշ ձև, որ կազմվում է ա վերջավորությամբ։ Այսպիսի բացառական ունեն տեղանունները, օրինակ՝ Բէվանա «Երևանից», Թիվլիդա, Լէջանա, Կիրօվականա, ԲՍտէփանավանա և այլն։ Այս ձևերը զործածվում են նաև որպէս սեռական, ինչպես՝ Բէվանա ջուր «Երևանի ջուր», Բէվանա բէրինք «Երևանից բերինք», Թիֆլիդա ախիկ «Թիֆլիսի աղջիկ», Թիֆլիդա հառս բէրինք «Թիֆլիսից հառս բերինք» և այլն։ Տեղանունների սեռականն ու բացառականը կազմվում են նաև սովորական ի. ից վերջավորություններով, օրինակ՝ Բէվանի ջուր, Բէվանից էմ գալի և այլն։ Այս ձևերը զործածվում են զրականի աղղեցությամբ։

Գործիական հոլովը կազմվում է օվ վերջավորությամբ, օրինակ՝ սարօվ, քարօվ։

Ներգոյական հոլովը կազմվում է րմ (<ում) վերջավորությամբ, օրինակ՝ սարւմ, քարւմ։

Ինչպես հայտնի է, արդի զրական լեզվում մի շարք բառերից (հատկապես անձերի հատուկ և հասարակ անուններից) ներգոյական հոլով չի կազմվում։ Հոռու խոսվածքում այսպիսի սահմանափակում չկա, և ներգոյական հոլով կարող են կազմել բոլոր գոյականները։ Որոշյալ առման դեպքում որոշյալ հոգ են ստանում ոչ միայն ուղղական, տրական և հայցական, այլև, ի տարբերություն արդի հայերենի, բացառական, գործիական, ներգոյական հոլովները, օրինակ՝ սարիցը, սարօվը, սարւմը, քարիցը, քարօվը, քարւմը և այլն։ Այսպիսով, Հոռու խոսվածքում բոլոր հոլովները, բացի սեռականից, որոշյալ առման դեպքում որոշյալ հոգ են ստանում։

Ուղղական հոլովը զործածվում է նաև որպէս կոշական։ Սակավաթիվ բառերի համար կոշականը ունի առանձին ձև, ինչպես՝ քյիրա, հէրա, մէրա, ախի, ապէրօ (մեծ եղբայր)։ Մի շարք հատուկ անուններ ունենում են օ վերջավորություն, օրինակ՝ Համբօ, Արմօ, Նեսօ, Կարօ, Գարօ, Գալօ, Սաթօ, Շօղօ, Լուսօ, Նաղօ, Մարօ և այլն։

Ածական անուն

Ածականների համեմատության աստիճանների կազմությունը.—Ածականը իր գրեկորումներով համարյա թե չի տարբերվում զրական հայերենից։ Բաղդատական աստիճանը կազմելու համար համեմատելի առարկան զրվում է բացառական հոլովով, իսկ ածականը մնում է անփոփոխ, օրինակ՝ էս տունը էն տանիցը մենձ ա, էս ախիկը էն ախիկանիցը սիրուն ա։ Համեմատությունը ուժեղացնելու համար ածականների վրա զրվում են դեռ կամ ջիլիզլիզլիս բառերը, օրինակ՝ էս տունը էն տանիցը դեռ (չիլիս/զիլիս) մենձ ա։ Գերազրական աստիճանը կազմելու համար ածականի վրա ավելանում է չիմնու «բոլորից» բառը կամ ամէնա զերազրականի նախածանցը, օրինակ՝ էս ախիկը ամէնասիրունն ա։ Բէխանց միշին չիմնու լավը տղէս ա։

Թվական անուն

Հոռու խոսվածքում զործածվող քանակական թվականներն են.

մին	տասը
էրկու	քսան
իրեք	յէռէսուն
չորս	քառասուն
հինգ	հիցցուն իցցուն
վեց	վացցուն
օխտը	օխտանասուն
ութը	ութանասուն
իննը	րնրսուն
	հարիր
	հազար հրգար

Բաղաձայնով սկսվող միավորները տասնավորների հետ կապակցվում են ր հոդակապով, իսկ ձայնավորով սկսող միավորները կապակցվում են առանց հոդակապի։ Ըստ այդմ՝ տասնավորներից և միավորներից կազմված քանակականները ունեն հետևյալ ձևերը. տասներմին, քսանէրկու, քառասներչորս, հիցցրնինը, օխտանասուութը և այլն։

Հոռու խոսվածքի դասական թվականները հետևյալներն են. առաշի | ըռաշի. յէրկրօթ, յէրօթ, չօրօթ, հինգյէրօթ, վեցյէրօթ, օխտյէրօթ, ությէրօթ, իներյէրօթ, տասյէրօթ.

տասնըմինյնրոթ: Դասական ի վականները բարբառի մեջ են մտել գրականի ազդեցությամբ և զործածվում են միայն «դասարան», «խումբ» նշանակելու համար: Բաշխական թվականները կազմվում են կրկնությամբ, ինչպես՝ մին-մին, էրկու-էրկու, չոռս-չոռս, վեց-վեց և այլն:

Չափական թվականները կազմվում են քանակականներից՝ անոց ածականով, օրինակ՝ իրեքանոց, չոռսանոց, օխտանոց, բննանոց և այլն:

Դերանուն

Անձնական դերանուններն են՝ յլս, դու//դուն, նա, մենք, դուք, նրանք//նհանք: Սրանց հոլովումը առանձնապես չի տարբերվում գրական հայերենի համապատասխան դերանունների հոլովումից, միայն բացառականները կազմվում են ոչ թե ից, այլ ի վերջավորությամբ՝ ինձա-նի, քեզանի և այլն: Դու//դուն դերանվան սեռական հոլովը լինում է՝ քու:

Գոյականներին հարաբերակից ցուցական դերանուններն են՝ սա, դա, նա, սրանք//սհանք, դրանք//դհանք, նրանք//նհանք, էս, էդ, էն, քստոնք, քոտոնք, քնդոնք: Սրանցից առանձնակի հոլովում ունեն էս, էտ, էն դերանունները: Սրանք հոլովվում են հետևյալ ձևով.

ուղղ.-հայց. էս, էտ, էն
սեռ.-տր. քստուր, քտուր, քնգուր
բաց. սրանի, դրանի, նրանի
գործ. սրանով, գրանով, նրանով
ներդ. սրանքմ, դրանքմ, նրանքմ

Սրանց հոգնակիները գնում են ց հոլովմամբ՝ քստոնք-քստոնց-քստոնցի-քստոնցով-քս-տոնցքմ ձևով: Ածականներին հարաբերակից ցուցական դերանուններն են՝ քսրավուր «այսպիսի», քրավուր «այդպիսի», քնրավուր «այնպիսի»: Թվականներին համապատասխան ցուցական դերանուններն են քսքամ «այսքան», քտքամ «այդքան», քնքամ «այնքան»:

Մակբայներին հարաբերակից ցուցական դերանուններն են. ա) ձեի՝ քսէնց//սէնց//քսէ//սէ «այսպես», քթէնց//թէնց//քթէ//թէ «այդպես», հնէնց//հնէ «այնպես», օրինակ՝ Սէնց մի անիլ, հնէնց արա «այսպես մի արա», այնպես արա»: բ) Տեղի՝ քստէղ//քստի «այստեղ», քտէղ//քտի «այդտեղ», քնգէղ//քնդի «այնտեղ»: Կարձ ձևերը ունեն ան-ով կազմվող միակ հոլովական ձև, որն ունի սեռականի և բացառականի իմաստ, օրինակ՝ Ըստիան խնձորը լավն ա. Ըստիան վէ կալավ:

Որոշյալ դերանուններն են՝ ամէն, ամէքը, ամէն մինը, չիմ, բիրադի, սադ:

Անորոշ դերանուններն են՝ մինը, օքմին//օքնիմ, էսինչ, էնինչ, մի քանի, մի քանիսը:

Հարցական-հարաբերական դերանուններն են՝ օվ, ինչ, վոր, ինչքամ, քանի, ինչթավուր, վորդի, ուր, յէփ, դրվորը (դեպի որ/կողմը), վոնց, խի «ինչու», ինչդա «ինչքան»:

Խոսվածքը փաստորեն ժխտական դերանուններ չունի: Այն դեպքում, երբ գրականում օգտագործվում է ոչ մեկը դերանունը, օրինակ՝ Ոչ մեկը չեկավ, ոչ մեկին չտեսա և այլն, խոսվածքում օգտագործվում է հատուկ շարահյուսական կառուցվածք: Դրանց համապատասխան բարբառային ձևերը կլինեն՝ Մինն էլա էկավ վոր, մընին էլա տէհա վոր: Այսպիսով, գրականի երկու ժխտման փոխարեն տվյալ դեպքում առկա է միայն մեկը:

Խոսվածքի փոխադարձ դերանուններն են՝ իրար (իրուր), մինը մընու:

Բա և խոնարհում

1) Դերբայներ.— Լոռու խոսվածքն ունի հետևյալ դերբայները՝ անորոշ, անկատար, ապառ-նի, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժամանակի և ձևի:

Անորոշ դերբայը կազմվում է իլ և ալ ածանցներով, ինչպես՝ րզատիլ, բժանիլ, խափիլ, աղալ, գոռալ, կառթալ և այլն: Լոռու խոսվածքում անորոշ դերբայը մասնակցում է բայական ժամանակների կազմությանը՝ բաղադրելով (հարկադրական եղանակի) ապառնին և անցյալի ապառնին՝ բրժանիլ տէմ, բրժանիլ տէի (բաժանելու եմ, բաժանելու էի կամ պիտի բաժանեմ, պիտի բաժանեի), պայմանական եղանակի ժխտական ապառնին ու անցյալի ապառնին՝ բր-ժանիլ չէմ, բրժանիլ չէի (չեմ բաժանի, չէի բաժանի) և արգելական հրամայականի եզակին ու հոգնակին՝ բրժա՛նիլ մի. բրժա՛նիլ մէք (մի՛ բաժանիր, մի՛ բաժանեք):

Անկատար դերբայը կազմվում է րմ (<ում) վերջավորությամբ, օրինակ՝ րզատրմ (աղա-տում), բրժանրմ, աղրմ, գոռրմ և այլն: Միայն երկու բայ՝ վալ և տալ անկատար դերբայը կազմում են իս վերջավորությամբ՝ վալիս, տալիս: Անկատար դերբայը բաղադրում է սահմա-

նական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները՝ բրժանըմ էմ, բրժանըմ ի, Շրջուն շարահասության ժամանակ իս վերջավորվող անկատար դերբայի ս վերջնահնչյունն ընկնում է, օրինակ՝ գալիս չէմ, տալիս չէմ, բայց՝ չէմ դալիս, չէմ տալի:

Ապառնի, վաղակատար և հստակատար դերբայները կազմությամբ չեն տարբերվում դրանց հայերենի համապատասխան դերբայներից: Միայն պետք է հաշվի առնել, որ Հոռու խոսվածքում բոլոր բայերի անորոշ և վաղակատար դերբայները ձևաբանորեն տարբերակված են, քանի որ գրականի ել վերջավորվող բայերը խոսվածքում անորոշում ունենում են իլ, իսկ վաղակատարում ել վերջավորությունը, օրինակ՝ անորոշ—բրժանիլ, ըզատիլ, վաղակատար—բրժանել, ըզատել:

Ապառնի դերբայը ժամանակների կազմությանը չի մասնակցում:

Ենթակայական դերբայը կազմվում է օղ ածանցով, որ դրվում է բոլոր բայերի անորոշի հիմքի վրա, օրինակ՝ ազատօղ, զրրօղ, գիզօղ, հաղօղ (խաղացող), լրվանօղ (լվացող), բրցրանօղ (բարձրացող): Այսպիսով, խոսվածքի ա խոնարհման բայերի ենթակայական դերբայը տարբերվում է գրականից. գրական լեզվում այն կազմվում է անցյալ կատարյալի, իսկ Հոռու խոսվածքում՝ անորոշի հիմքից:

Ժամանակի դերբայը կազմվում է ուս ածանցով, որ դրվում է անորոշի ձևի վրա, ըստ որում անորոշի իլ ածանցը փոխվում է էլ-ի. օրինակներ՝ բէրիլ-բէրէլուս, գրբիլ-գրբէլուս, գողալ-գողալուս և այլն: Հոռու խոսվածքի ժամանակի դերբայը համապատասխանում է արդի հայերենի անկատարի 2-րդ ձևին՝ իս վերջավորվող դերբային և ամենայն հավանականությամբ նրանցից էլ հենց առաջացել է՝ իս>ուս հնչյունափոխությամբ (գրբիլիս>գրբիլուս):

Ձևի դերբայը կազմվում է էն ածանցով, որ դրվում է անորոշի վրա, ըստ որում անորոշի իլ ածանցը այդ դեպքում փոխվում է էլ-ի. օրինակներ՝ բրածիլ-բրածէլէն, գոռծիլ-գոռծէլէն, յէրէլիլ-յէրէլէլէն, դողալ-դողալէն և այլն: Այդ դերբայը ցույց է տալիս գործողության կատարման ձևը՝ իմաստով համապատասխանելով արդի հայերենի անորոշ դերբայի գործիական հոլովաձևին, օրինակ՝ Յէրէլէլէն ա ման գալի, Ուտէլէն ա գոռծ անրմ, դրդողալէն տուն մրտավ և այլն:

2) Խոնարհում.—Հոռու խոսվածքը ունի նույն եղանակները, ինչ որ գրական հայերենը, այն է՝ սահմանական, ըզական, պայմանական, հարկադրական, հրամայական: Սահմանական եղանակն ունի ներկա, անցյալ անկատար, վաղակատար, անցյալի վաղակատար, հարակատար, անցյալի հարակատար ու անցյալ կատարյալ ժամանակները: Այդ ժամանակներից 6-ր բաղադրյալ են և կազմվում են անկատար, վաղակատար ու հարակատար դերբայներով ու օժանդակ բայի ներկայի կամ անցյալի ձևերով, իսկ մեկը՝ անցյալ կատարյալը պարզ է և կազմվում է բայահիմքով ու վերջավորություններով և իր դրսևորումներով առանձնապես չի տարբերվում գրական հայերենի համապատասխան ժամանակներից: Օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ էմ, էս, ա, էնֆ, էֆ, էն: Որոշ գյուղերում (Լեջան, Սվերդլով, Վարդաբլուր և այլն) օժանդակ բայի արմատական ձայնավորը ունի երկրարթառային ե—իէ հնչյունը: Օժանդակ բայի անցյալի ձևերում, բացի եզակի երրորդ դեմքից, է ձայնավորն ընկնում է: Ըստ այդմ, օժանդակ բայի անցյալի ձևերն են՝ ի, իր, էր, ինք, իք, ին, ին:

Սահմանական եղանակի բայաձևերը կունենան հետևյալ պատկերը.

Ներկա	Անցյալ անկատար	Անցյալ կատարյալ	
բրժանըմ էմ	բրժանըմ ի	բրժանէցի	բրժանէցինք
վաղակատար	Անցյալի վաղակատար	բրժանէցիր	բրժանեցիք
բրժանել էմ	բրժանել ի	բրժանէց	բրժանէցին
Հարակատար	Անցյալի հարակատար		
բրժանած էմ	բրժանած ի		

Հոռու խոսվածքում գրական հայերենի ապառնի և անցյալի ապառնի (գրբիլու եմ, գրբիլու էի) ժամանակները բացակայում են: Դրանց իմաստն արտահայտվում է հարկադրականի ձևերով: Սահմանական եղանակի ժամանակներից առանձնահատուկ տեղ է գրավում անցյալի անկատարը: Բացի բաղադրյալ անկատարից (բրժանըմ ի, իր, էր, ինք, իք, ին), Հոռու խոսվածքում կա մի երկրորդ անկատար, պարզ անկատար, որ նույնանում է գրաբարյան անկատարին, այսինքն կազմվում է բայահիմքով և վերջավորություններով, ինչպես՝

բրժանէի, բրժանէիր, բրժանէր, բրժանէինք, բրժանէիր, բրժանէին:

նույն ձևով նաև՝ ածիհ. ազօթլի, բմանչլի, ասէի, անրծլի, բէրէի և այլն:

Անկատարի այս ձևը ունենում են ոչ միայն իլ (ել), այլև ալ խոնարհման բայերը, որոնք այս դեպքում շուտ են դալիս ել խոնարհման, ինչպես.

զընալ		բըցրանալ	
զընէի	զընէինք	բըցրանէի	բըցրանէինք
զընէիր	զընէիրք	բըցրանէիր	բըցրանէիրք
զընէր	զընէին	բըցրանէր	բըցրանէին

Անցյալ անկատարի այսպիսի կազմությամբ չոտու խոսվածքը յուրահատուկ տեղ գրավելով հայերենի բարբառների մեջ՝ անմիջական շփման մեջ է մտնում գրարարի հետ:

Ըղձական եղանակն ունի միայն մի ժամանակ՝ ապառնի, որ կազմվում է բայահիմքով և վերջավորություններով.

բըժանէմ	բըժանէնք
բըժանէս	բըժանէք
բըժանի	բըժանէն

Ինչպես վերևում ասել ենք, բըժանէի, բըժանէիր... և այլ ձևերը խոսվածքում արտահայտում են անցյալ անկատար ժամանակի իմաստ. հենց դրանով էլ բացատրվում է ըղձականի անցյալ ապառնիի ձևերի բացակայությունը: Այս ժամանակի իմաստը կարող է արտահայտվել անցյալի վաղակատարի միջոցով, ինչպես՝ Խնչ կրլէր բլիւուն հլտրալ բլբլի իր ռիւնչ կլիւնք բրեխային հետդ բրեբիրք:

Պարունական եղանակն ունի 2 ժամանակ՝ ապառնի և անցյալի ապառնի, որոնք նույնանում են գրական հայերենի համապատասխան ժամանակների հետ:

Ապառնի		Անցյալի ապառնի	
կըբըժանէմ	կըբըժանէնք	կըբըժանէի	կըբըժանէինք
կըբըժանէս	կըբըժանէք	կըբըժանէիր	կըբըժանէիրք
կըբըժանի	կըբըժանէն	կըբըժանէր	կըբըժանէին

Գյառ-Գյառ գյուղում կա նաև պայմանականի մի երկրորդ ձև, որ կազմվում է ետադաս դրվող կա եղանակիչով.

բըժանէմ կա	բըժանէնք կա
բըժանէս կա	բըժանէք կա
բըժանի կա	բըժանէն կա

Հարկադրական եղանակն ունի 2 ժամանակ՝ ապառնի և անցյալի ապառնի, որոնք կազմվում են անորոշ դերբայից և տ կամ պրտ (<պիտի) եղանակիչներից, որոնք ստանում են դիմային վերջավորությունները և դրվում են դերբայից հետո.

Ապառնի		Անցյալի ապառնի	
բըժանիլ	տէմ կամ պրտէմ	բըժանիլ	տէնք կամ պրտէնք
	տէս պրտէս		տէք պրտէք
	տի պրտի		տէն պրտէն

Ապառնի		Անցյալի ապառնի	
բըժանիլ	տէի կամ պրաէի	բըժանիլ	տէինք կամ պրաէինք
	տէիր պրաէիր		տէիրք պրաէիրք
	տէր պրաէր		տէին պրաէին

Հարկադրական ձևերը հավասարապես գործածվում են նաև սահմանականի ապառնիի և անցյալի ապառնիի իմաստով:

Հրամայական եղանակի եղակին կազմվում է ի, տ, իսկ հոգնակին է՛ք վերջավորությամբ, օրինակ՝ բըժա՛նի, հա՛լի, գընա՛. բըժանե՛ցէ՛ք, հա՛լէ՛ք, գընա՛ցէ՛ք:

3) Թխտական խոնարհում.— Օժանդակ բայի ժխտականը կազմվում է չ մասնիկի միջոցով, Օժանդակ բայի ժխտականն ձևերն են.

Ներկա		անցյալ	
չէ՛մ	չէ՛նք	չէի (չի)	չինք
չէ՛ս	չէ՛ք	չիր	չիրք
չի	չեն	չէր	չին

Սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակների ժխտականի կազմության ժամանակ ժխտական է դառնում միայն օժանդակ բայը՝ զրվելով ղերբայից հետո, օրինակ՝ նրստրմ կմ- նրստրմ չլմ, րնրմ կմ-րնրմ չլմ, նրստլ կմ-նրստլ չլմ, րնլ կմ-րնլ չլմ և այլն:

Անցյալ կատարյալի և րդական եղանակի սպառնի ժխտականը կազմվում է վոչ մաս- նիկի միջոցով, որը զրվում է խոնարհված բայաձևերի վրա՝ վերջից, օրինակ՝ նրստլցի-նրստլ ցի վոչ, րնլցի-րնլցի վոչ, նրստլմ-նրստլմ վոչ, րնլմ-րնլմ վոչ:

Պայմանական եղանակի ժխտականը կազմվում է անորոշ ղերբայի և օժանդակ բայի ժխտական ձևերի միջոցով, որոնք նտադաս ղիրք ունեն, ինչպես՝ կրնրստլմ-նրստլ չլմ, կրմլն- ձանամ-մլնձանալ չլմ, կրնրստլի-նրստլի չլի, կրմլնձանլի-մլնձանալ չլի և այլն:

Հարկադրական եղանակի ժխտականը կազմվում է անորոշ ղերբայի և տ/պրտ եղանա- կիչների ժխտական խոնարհման միջոցով, որոնք նտադաս ղիրք ունեն:

Հարկադրականի դրական ձևերը

դըրիլ	տէ՛մ	տէ՛նք
	տէ՛ս	տէ՛ք
	տի	տեն

Հարկադրականի ժխտական ձևերը

զըրիլ	չրտէ՛մ	չրտէ՛նք
	չըտէ՛ս	չըտէ՛ք
	չրտի	չրտեն

Անգլական հրամայականը կազմվում է անորոշ ղերբայի և մի, մլն մասնիկների միջո- ցով, որոնք նտադաս ղիրք ունեն, օրինակ՝ րնի՛-րնի՛լ մի, րնլ՛ցլն-րնի՛լ մլն, զրի՛-զրի՛լ մի, զրլ՛ցլն-զրի՛լ մլն և այլն:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Հոռու խոսվածքում, ի տարբերություն դրական հայերենի, ժխտական մասնիկները զրվում են ղերբայական ձևերից և խոնարհվող բայաձևերից հետո: Սա Հոռու խոսվածքի ամենացայտուն հատկանիշներից մեկն է և անմիջապես իր վրա է զրավում ուսումնասիրողի ուշադրությունը:

4) Պատճառական բայեր.— Պատճառական բայերը կազմվում են ացն, ցրն ածանցներով, ըստ որում բոլոր բայերի պատճառականի անորոշը վերջավորվում է իլ ձևով, ինչպես՝ ըման- չիլ-ըմանչացնիլ, խըմիլ-խըմացնիլ, նըստիլ-նըստացնիլ, ղողալ-ղողացնիլ, հաքնիլ-հաքցընիլ, թրոչիլ-թրոցընիլ և այլն:

Պատճառական բայերի խոնարհումը զրական հայերենից տարբերվում է նրանով, որ անց- յալ կատարյալի եզակի 3-րդ դեմքը կազմվում է ուց վերջավորությամբ, օրինակ՝ բըցրացրի, բըցրացրիր, բըցրացրուց: Նույն ձևով նաև հալցրուց, իրոցրուց, խըմացրուց, ըմանչացրուց և այլն:

5) Կրավորական բայեր.— Կրավորական բայերը կազմվում են վ ածանցով, որը զրվում է բոլոր բայերի ներկայի հիմքի վրա, ըստ որում իւ վերջավորվող բայերը վերածվում են վիլ ձևի, իսկ ալ վերջավորվողները՝ վալ ձևի, ինչպես՝

ա) էրիլ-էրվիլ, անըծիլ-անըծվիլ, ասիլ-ասվիլ, զիզիլ-զիզվիլ, խէխտիլ-խէխտվիլ և այլն:

բ) աղալ-աղվալ, կառթալ-կառթվալ, լըվանալ-լըվանվալ, հրսկանալ-հրսկանվալ:

Մակրայներ

Հոռու խոսվածքի հայերեն մակրայներից են. առաչ, դէսը, դէդը, դէնը, էլ «այլևս», էլ յէդ «նորից, կրկին», էքուց «վաղը», ըսօր «այսօր», հէրու, հըրէ «ահա», հըրէս, հըրէդ, հըրէն, ղորթ «հիշտ, ուղիղ», մըխէլի «մի քիչ», յէննա/յէդօվ «հետո», շատ, ռավոդր «առավոտը, առա- վոտյան», վէր «վեր և վայր», բիզուներ «իրիկունը»:

Փոխառյալ մակրայներից են. անչաղ «հագիվ», բալքյիմ/յրալքա «թերևս, գուցե», բիրդան «հանկարծ», թէդ «շուտ», յարար «արդյոք», նըհախ «անտեղի, իզուր»:

Կապեր և կապական բառեր

Հոռու խոսվածքում գործածվող կապերն ու կապական բառերն են. աղաքին//առաչին «առաջ», առանց. դրրա «դեպի», կըշտին «կողքին, մոտ», կուշտը «մոտ», հէտ, հըմա//մա «համար», մընչի//չըվէլ//ընչէլ «մինչև», միչին «մեջ», յեղը//յէղօ «հետո», պէս, սավայի «բացի», վըրա//վըրին, տակին «տակ»:

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, Հոռու խոսվածքում տեղի անունները սովորաբար կապի պաշտոն են կատարում տրական հոլովաձևով. դրանք կարող են ունենալ նաև բացառական և գործիական հոլովաձևեր, ինչպես՝ աղափն-աղափիցը-աղափօվը. կըշտին-կըշտիցը-կըշտօվը, միչին-միչիցը-միչօվը. վըրին-վըրիցը-վըրօվը. տակին-տակիցը-տակօվը:

Շաղկապներ

Հոռու խոսվածքում գործածվում են հետևյալ շաղկապները. էլ, քէ, վոր, յա «կամ», համ... համ «և... և», համա «բայց», լէփ. չունի «որովհետև, քանի որ», վոչ... վոչ, ու: